կրէ իւր վրայ, իբրև յատուկ անուն. այլ երևակայութիւնս զիս այնպէս կ'ուզէր համոզել՝ որ հայերէն կիրճ բառը լինի, իբրև նեղուց գործածուած. վաղ ցնորից երևակայութեան... այնպէս ինձ կ'երևար որ Միհրդատ անմիջապէս Թերակղզւոյս տիրելեն վերջ՝ 'ի ձեռն Դէոփանդոսի զօրավարին, եկած է հոս 'ի Սինոպայ, կողակցին հայկազն բամբշին հետ 'ի միասին, և երբ պերճանաք կը յայտնէ իւր կամքը ընկերոջը՝ թէ կ'ուզէ՞ այդ երկուց ծովուց միջավայրքն հաստատել իւր գահը, փոխելով 'ի Սինոպայ. խոհական բամբիշն մեղմելուզելով քաջին յոխորտ բարքը, կը յայտնէ թէ « Ինքն այն տեղ նեղուց կամ կիրճ մի կը տեսնէ » : Բայց Միհրդատ հասկնալով թագուհւոյն միտքը՝ Կիրճ կամ Կերջ կը կոչէ տեղին, և լերին իւր անունը կը սեփականէ, և շուտով թագաւորանիստ քաղաք կը լինի Կերջ :

Շատ անգամ երևակայութեան գծած պատկերը քան զբնականը կը գերազանցէ, զի երևակայութիւնն գունոց և ներկերու խնայութիւն անել չախորժիր. անհրաժեշտ է որ Միհրդատ այդ բլուրին վրայ շատ անգամ եկած է թագուհւոյն հետ 'ի միասին. զի զբօսանաց մի միայն յարմարաւոր դիրքն է Կերջի. այլ ինձ 'ի ծովէ այնպէս կ'երևէր, որ բլրիս բարձրագոյն կէտին վրայ կանգնած է տիտանայինն Միհրդատ, Պոնտոսի իշխող. Հռովմայ արժանաւոր ախոյեան, Տիգրանայ համապատշաճ փեսայ. գլուխը փետրազարդ սաղաւարտ, զրահաւորեալ հսկագիտակ մարմնով, աջ ոտքը ամուր կոխած նոր տիրած հողին վրայ, և բազուկը դէպ 'ի ծով պարզած, իբրև թէ զրուցէր 'ի ձախմէ կանգնած թագուհւոյն, « Տես որպիսի՞ քաջի ունիս բազդ հարան և թագակից լինելու ». իսկ թագուհին համապատշաճ քաջի